

ՆԻՆԱ ԿՈՒՑԱՆՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



ՈՐԴԵԳՐՎԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Գիտական հոդվածում վերլուծվել են որդեգրվածների ժառանգական իրավունքների առանձնահատկություններն ու խնդիրները: Հեղինակը նախ քննադատում է քաղաքացիական և ընտանեկան օրենսգրքի իրավական նորմերի հարաբերակցությունը այդ ուղղությամբ, մեկնաբանում է համապատասխան օրենսդրական դրույթներն ու եզրահանգում է կատարում նրա մասին, որ որդեգրվածների ժառանգական իրավունքի կարգավորման ժամանակ քաղաքացիական օրենսգրքի դրույթները չեն կարող արդյունավետ գործել առանց ընտանեկան իրավունքի համապատասխան դրույթների օգնության. այդպիսի համագործակցության արդյունքում էականորեն ընդլայնվում են որդեգրվածների ժառանգական իրավունքները:

Գիտական հոդվածում ներկայացված մեկնաբանությունների ներքո նորովի է ընկալվում որդեգրվածների ժառանգական իրավունքների կարգավորումը: Դա խոսում է տվյալ հոդվածի գիտական նորարարության մասին, որը կարող է օգտակար լինել իրավակիրառական պրակտիկայում:

Մի շարք երկրների Քաղաքացիական օրենսգրքի վերլուծության հիման վրա հեղինակը որոշ առաջարկություններ է անում, որոնք կարող են զգալիորեն օգնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ որդեգրվածների ժառանգման ինստիտուտի զարգացմանը:

Հիմնարար բառեր- ժառանգման իրավունք, ժառանգ, որդեգրվածների ժառանգում, ընտանեկան իրավունք:

Ըստ օրենքի ժառանգման հարաբերություններում իր դրոշմն է թողնում նաև որդեգրման ինստիտուտը: Թե ինչպես են կարգավորվում ըստ օրենքի ժառանգման հարաբերությունները որդեգրման պարագայում, այդ հարցին հստակ անդրադարձել է ՀՀ քաղ.օր. 1223-րդ հոդվածը, համաձայն որի՝

1. Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածն ու նրա երեխաները մի կողմից, և որդեգրողն ու նրա ազգականները մյուս կողմից հավասարեցվում են ըստ ծագման ազգականներին (արյունակից ազգականներին):

2. Որդեգրվածը և նրա երեխաները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի ծնողների ու ըստ ծագման նրա այլ ազգականների մահից հետո:

Որդեգրվածի ծնողները և ըստ ծագման նրա այլ ազգականները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի ու նրա երեխաների մահվանից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1223-րդ հոդվածն իր տրամաբանությամբ հիմնվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի վրա, որը սահմանում է, որ «*Որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ*»:

Թվում է՝ ամեն ինչ արդեն իսկ ասված է, այլևս որևէ խնդիր ծագել չի կարող ժառանգման հարաբերություններում, սակայն դա միայն առաջին հայացքից: Որդեգրման ինստիտուտը, որքան էլ որ որդեգրվածին և որդեգրողին հավասարեցնի ծնողին և զավակին, միևնույնն է, այդ կապը չի կարող իսկա-

պես արտահայտվել ճիշտ այնպես, ինչպես կարող են լինել կապերն իսկապես ծնողի և իր հարազատ զավակի միջև: Միայն այն հանգամանքը, որ որդեգրումը կարող է վերացվել ու այդքանով որոշակի խնդիրներ առաջ բերել ժառանգման ինստիտուտում, արդեն իսկ բավական է համոզվելու, թե որքանով կարող է որդեգրումը տարբերություններ ունենալ «արյունակից ծնող-զավակ» կապի համեմատությամբ, որը երբեք չի կարող վերացվել, քանզի այն օբյեկտիվ է և անխախտ:

Վերադառնալով ՀՀ քաղ.օր. 1223-րդ հոդվածին՝ պետք է ասել, որ նրանում կրկնվում են իրավական մոտեցումներն այնպես, ինչպես ընդունված էր նախորդ օրենսդրությամբ: Սակայն պետք է նկատի ունենալ մի հանգամանք. որդեգրման ինստիտուտը կարգավորող հիմնական իրավական աղբյուրը ՀՀ ընտանեկան օրենսգրքն է, որտեղ համապարփակ կերպով կարգավորված են որդեգրողի և որդեգրվողի, որդեգրվածի և իր կենսաբանական ծնողների ու վերջիններիս ազգականների միջև գործող գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները: Այնպես որ, ՀՀ քաղ.օր. 1223-րդ հոդվածը գործող իրավակարգավորումներում պետք է քննարկվի, վերլուծվի և գնահատվի ՀՀ ընտանեկան օրենսդրության համապատասխան դրույթների լույսի տակ:

ՀՀ քաղաքացիական և ՀՀ ընտանեկան օրենսդրության կապն ու առնչությունները որոշվում են ՀՀ քաղ.օր. 1-ին հոդվածի 4-րդ մասի դրույթով. «*Ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայ-*

րի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ: ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ»: Այս դրույթն ինքնին արտահայտում է այն գաղափարը, մասնավորապես, որ ընտանեկան հարաբերությունները համարվում են քաղաքացիական հարաբերությունների հատուկ տեսակ, որոնք պետք է կարգավորվեն հատուկ ընտանեկան օրենսդրությամբ, և միայն չկարգավորվելու դեպքում կարող են կարգավորվել քաղաքացիական օրենսդրությամբ: Մեր կողմից քննարկվող խնդիրն ունի երկու կողմ՝ ժառանգում և որդեգրում: Ժառանգման առանձնահատկությունները տվյալ պարագայում պայմանավորված են որդեգրման առանձնահատկություններով, որոնք էլ հենց ընտանեկան օրենսդրության բաժինն են կազմում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է.

1. Որդեգրված երեխաներն ու նրանց սերունդը որդեգրողների և նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները որդեգրված երեխաների ու նրանց սերունդի նկատմամբ իրենց անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին:

2. Որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ կորցնում են անձնական ոչ գույքային ու գույքային իրավունքները և ազատվում են պարտականություններից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում ամրագրված է ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորման ֆունդամենտալ սկզբունքը, համաձայն որի՝ «Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը (ընդգծ. մերն է) Հայաստանի Հանրապետությունում հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո են:

Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը (ընդգծ. մերն է)»: ՀՀ ընտանեկան օրենսդրության այս պահանջը իր հերթին հենված է ՀՀ Սահմանադրության այն հրամայականի վրա, որ «Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար» (36-րդ հոդված): Նման իրավակարգավորման պայմաններում տեղին է վկայակոչել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթները.

3. Երեխային մեկ անձի կողմից որդեգրելիս անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները կարող են պահպանվել մոր ցանկությամբ, եթե որդեգրողը տղամարդ է, կամ հոր ցանկությամբ, եթե որդեգրողը կին է:

4. Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը

մահացել է, ապա մահացած ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը:

Ինչպես նկատում ենք, ՀՀ ընտանեկան օրենսդրությունը թույլ է տալիս գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունների պահպանումը որդեգրվածի և նրա ծնողներից մեկի հետ, ընդ որում, այդ հարաբերությունների պահպանումը պայմանավորված է ծնողներից մեկի կամքով, այն էլ եթե դա են պահանջում երեխայի շահերը:

Եթե ՀՀ ընտանեկան օրենսգրքի դրույթը մեկնաբանենք տառացիորեն, ստացվում է, որ որդեգրվածը գույքային, ներառյալ՝ ժառանգման, հարաբերությունները կարող է պահպանել միայն այդ մեկ ծնողի հետ, բայց անցում չի կարող կատարել այդ մեկ ծնողի մյուս ազգականներին: Բայց իրավաբանական գրականության մեջ հիշյալ նորմին տրվել է նաև ավելի լայն մեկնաբանություն այն մասին, որ որդեգրվածը կարող է հարաբերությունները պահպանել ինչպես ծնողի, այնպես էլ այդ ծնողի կողմից մյուս ազգականների հետ :

Իրավաբանական գրականության մեջ եղել են նաև այլ մեկնաբանություններ, որոնց կողմնակից են այնպիսի իրավագետներ, ինչպիսիք են Յու.Կ.Տոլստոյը, Ա.Լ.Մակոլսկին, Չ.Գ.Կրիլովը, Լ.Մ.Պչեխինցևան: Օրինակ, Ա.Լ.Մակոլսկին նշում է, որ ընտանեկան օրենսդրությունը հնարավոր է համարում գույքային հարաբերությունների պահպանումը միայն ծնողի, այլ ոչ թե նաև տվյալ ծնողի գծով մյուս ազգականների հետ, և միայն տվյալ ծնողի մահվան դեպքում է հնարավոր այդ ծնողի գծով մյուս ազգականների հետ գույքային հարաբերությունների պահպանումը, այն էլ եթե այդ մասին խնդրել է մահացած ծնողը, և այդ են պահանջում երեխայի շահերը: Ընդ որում, դա կատարվում է դատարանի վճռի հիման վրա: Այդ կապակցությամբ, օրինակ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվում է. «*Որդեգրված երեխայի հարաբերությունները ծնողներից մեկի կամ մահացած ծնողի ազգականների հետ պահպանելու մասին նշվում է երեխային որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ*»: Այս առումով Լ.Մ.Պչեխինցևան նշում է, որ որդեգրվածի ծնողներից մեկի ծնողական իրավունքների պահպանման մասին պետք է նշվի որդեգրման մասին դատարանի վճռի եզրափակիչ մասում: Այդ հանգամանքի մասին վճռում նշումների բացակայությունը ավտոմատ կերպով հանգեցնում է որդեգրվածի և նրա ծնողների միջև որևէ հարաբերության դադարեցման:

Փաստորեն, քննարկվող հարցի կապակցությամբ հնարավոր են երկու մեկնաբանություններ՝ լայն և նեղ, և թե որն է դրանցից առավել ընդունելի, կախված է այն իմաստից ու նշանակությունից, որից ելնելով էլ օրենսդիրը նախատեսել է նման բացառություններ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նկատում ենք, ՀՀ ընտ.օր. 126-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է երեխայի որդեգրումը մեկ անձի կողմից, այլ ոչ թե ամուսնական զույգի կողմից: Դա նշանակում է, որ երեխան գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ է ձեռք բերում միայն այդ մեկ անձի և նրա գծով վերջինիս հարազատների հետ: Դա կարող է բավական սահմանափակել երեխայի անձնական ոչ գույքային և գույքային, ներառյալ՝ նաև ժառանգման իրավունքները: Նման սահմանափակ հնարավորությունների պարագայում, երբ ՀՀ օրենսդիրը ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով նման հնարավորություն է տալիս, դա միայն և միայն մեծացնում է երեխայի գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների շրջանակը: Դրա արդյունքում նախ մեծանում է երեխայի ընտանեկան միջավայրը, երեխան մեծ շանսեր է ձեռք բերում՝ հնարավոր ժառանգման կարգով բարելավելու իր հետագա նյութական բարեկեցությունը: Եվ քանի որ երեխայի շահերի պաշտպանությունն էլ հանդիսանում է ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորման ֆունդամենտալ սկզբունքը, որից ելնում է նաև որդեգրման ինստիտուտը, մենք լիովին հիմնավոր ենք համարում այն մեկնաբանությունը, որ մեկ անձի կողմից որդեգրվածը պահպանում է իր գույքային, ներառյալ՝ ժառանգման հարաբերությունները ոչ միայն իր ծնողներից մեկի հետ, այլև նրա միջոցով, նաև այդ ծնողի գծով մյուս բոլոր ազգականների հետ: Այս մեկնաբանության հիմնավորման համար լրացուցիչ փաստարկ է նաև հենց ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որը կրկին մեջբերում ենք. «*Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը մահացել է, ապա մահացած ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը*»:

Ի դեպ, մեջբերված օրենսդրական դրույթի առնչությամբ իրավաբանական գրականության մեջ ևս լուրջ տարածայնություններ և տարաբնույթ մեկնաբանություններ կան: Մեջբերված դրույթում երեք կատեգորիայի անձինք՝ մահացած ծնողը կենդանության օրոք, ծնողի մահվան դեպքում երեխայի պապը և տատը իրավունք ունեն դատական կարգով խնդրել, որ պահպանվեն անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը: Շատ հեղինակներ կարծում են, որ երեխայի անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունները կարող են պահպանվել միայն որդեգրվածի պապի և տատի հետ, իսկ ծնողի մյուս ազգականները տվյալ պարագայում նախատեսված չեն: Շատ հեղինակներ, ելնելով մեր կողմից արդեն վերևում բերված փաստարկներից, համարում են, որ օրենսդիրը նկատի ունի ոչ միայն որդեգրվածի

պապին և տատին, այլև ծնողի կողմից մյուս բոլոր ազգականներին, իսկ որդեգրվածի պապի և տատի մասին օրենսդիրը նշում է այն ասպեկտով, որ բացի մահացած ծնողից, նաև պապն ու տատն էլ իրավունք ունեն դատական կարգով հանդես գալ մեզ արդեն հայտնի խնդրանքով: Սա շատ տեղին մեկնաբանություն է, որն ակնհայտորեն բխում է նաև օրենսդրական ձևակերպումից: Այսպես, ՀՀ ընտ.օր. 216-րդ հոդվածի 4-րդ մասում հստակ նշվում է, որ «*մահացածի ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ*» (ընդգծ. մերն է): Եթե օրենսդիրը հատուկ նկատի ունենար պապին և տատին, ապա օրենսդրական ձևակերպումը կլիներ մոտավորապես հետևյալ կերպ. «*Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը մահացել է, ապա մահացածի ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները երեխայի պապի կամ տատի (ընդգծ. մերն է) նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը*»:

Հնարավոր թյուրըմկալումներից զերծ մնալու համար կրկին շեշտում ենք, որ բնականաբար այս կերպ չի ձևակերպված օրենսդրական նորմը, հետևաբար արդարացիորեն որդեգրվածը համապատասխան պայմանների առկայության դեպքում կարող է պահպանել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 216-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որը համանման է Ռուսատանի ընտանեկան օրենսգրքի համապատասխան դրույթին, կարող է վերլուծվել ռուս ցիվիլիստների տեսակետների ու կարծիքների ներկայացման հիման վրա: Մասնավորապես, խիստ ուշագրավ տեսակետ է արտահայտում Ա.Լ. Մակովսկին այն կապակցությամբ, որ իբրև մահացածի ծնողի՝ որդեգրվածի պապի և տատի խնդրանքի պարագայում նույնիսկ, այնուամենայնիվ, պետք է առկա լինի այն ազգականների համաձայնությունը, որոնց հետ որդեգրվածը կարող է պահպանել իր անձնական ոչ գույքային և գույքային, ներառյալ՝ ժառանգման հարաբերությունները: Այս մոտեցումն արդարացիորեն ենթարկվել է քննադատության այն հիմնավորմամբ, որ ընտանեկան օրենսդրությունը չի ելնում այն դիրքերից, որ ազգակցական կապերի համար անհրաժեշտ է անձանց համաձայնությունը. ազգակցությունը հենված է օբյեկտիվ բնական արյունակցական կապերի վրա: Բայց միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ թեկուզև մահացածի ծնողները՝ որդեգրվածի պապը և տատը, կարող են դատարան դիմել և փորձել պահպանել որդեգրվածի ու *մահացած ծնողի ազգականների միջև անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականություն-*

www.journal.lawinstitute.am

ները, դա չի նշանակում, որ նրանք պատասխանատու են նաև այդ կապերի պահպանման համար: Հիշյալ անձինք ընդամենը կարող են հանդես գալ նման նախաձեռնությամբ, բայց ոչ ավելին: Նման նախաձեռնության դեպքում նույնիսկ, երբ ազգականները չեն ցանկանում հարաբերություններ պահպանել որդեգրվածի հետ, նրանք հատուկ կամահայտությամբ հանդես գալու կարիք չունեն, նման հրաժարման հատուկ կարգ չի նախատեսվում. բավական է, որ ազգականները որդեգրվածին ժառանգությունից զրկեն կտակ կազմելով, և որդեգրվածն էլ ոչ մի պարագայում ժառանգության պարտադիր բաժնի իրավունք չի ունենա, քանի որ այդ իրավունքից օգտվում են միայն ժառանգատուի առաջին հերթի ժառանգները: Եթե հակիրճ ասենք, ապա որդեգրվածի մահացած ծնողի ծնողների՝ որդեգրվածի պապի և տատի կողմից դատարան դիմելը և վճիռ ստանալը որևէ պարտավորություն չի ստեղծում որդեգրվածի և նրա ազգականների միջև:

Հետաքրքիր է նաև այն հարցի պարզաբանումը, թե օրենսդրի կողմից ինչու են մեզ հայտնի այդ երեք կատեգորիայի անձինք լիազորվել դիմելու դատարան և նախաձեռնել պահպանելու անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ: Օրենսդրի ընտրությունը պատահական չէ. որդեգրվածի և ազգականների միջև կամուրջը հենց որդեգրվածի ծնողն է կամ ծնողի ծնողը՝ պապը և տատը: Որդեգրվածի մասին ազգականները կարող են տեղեկանալ հենց այս օղակների միջոցով, և սա էլ հանդիսացել է այն ողջամիտ հիմնավորումը, որը դրվել է նման ընտրության հիմքում:

Ուշագրավ է նաև այն հարցը, թե ինչ ազգականների շրջանակ է նկատի առնվում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասով: Հիշյալ նորմում ուշադիր լինենք ձևակերպմանը. «*Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը մահացել է, ...*»: Ստացվում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը կարող է գործել միայն այն դեպքում, երբ մահանում է որդեգրվածի ծնողներից մեկը: Իսկ երբ մահանում են որդեգրվածի ծնողները, ապա կարող է արդյոք կիրառվել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը: Պատասխանը միանշանակ է. երկու ծողների մահվան դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը պետք է մեկնաբանել տարածականորեն և ասել, որ երկու ծնողների կողմի ազգականների միջև էլ պետք է պահպանվեն անձնական ոչ գույքային և գույքային, ներառյալ՝ ժառանգման հարաբերությունները որդեգրվածի հետ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կրկին ցանկանում ենք վերադառնալ սույն պարագրաֆի սկզբում բարձրացված հարցին, թե ինչպես վարվել, երբ ՀՀ քաղ.օր. 1223-րդ հոդվածի 2-րդ մասով «*որդեգրվածը և նրա երեխաները, ըստ օրենքի, չեն ժառանգում*

որդեգրվածի ծնողների ու ըստ ծագման նրա այլ ազգականների մահից հետո», իսկ ՀՀ ընտ.օր. 126-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով «*երեխային մեկ անձի կողմից որդեգրելիս անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները կարող են պահպանվել մոր ցանկությամբ, եթե որդեգրողը տղամարդ է, կամ հոր ցանկությամբ, եթե որդեգրողը կին է: Եթե որդեգրվող երեխայի ծնողներից մեկը մահացել է, ապա մահացածի ծնողի (երեխայի պապի կամ տատի) խնդրանքով կարող են պահպանվել անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները մահացած ծնողի ազգականների նկատմամբ, եթե այդ են պահանջում երեխայի շահերը:*

Եթե խստորեն հետևենք քաղաքացիական օրենսգրքին, ապա որդեգրվածը ոչ մի պարագայում չի կարող ժառանգել իր ծնողներին և նրանց ազգականներին, իսկ երբ մեկնաբանում ենք ընտանեկան օրենսգրքը, ապա որդեգրվածին նման իրավունք վերապահվում է: Այստեղ տեղին է վկայակոչել երեխայի իրավունքների համակողմանի պաշտպանության սկզբունքը, որը ոչ միայն ընտանեկան-իրավական ուղղվածություն ունի, այլև հանդիսանում է սահմանադրական նորմ, տարածվում է ՀՀ ողջ օրենսդրության վրա, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներն ինքնին, ինչպես նաև իրավունքի մյուս աղբյուրների հետ համեմատական վերլուծության դեպքում պետք է մեկնաբանվեն նաև այդ սկզբունքի պահանջների խստիվ պահպանմամբ: Կասկածից վեր է, որ ՀՀ իրավական համակարգում որդեգրվածն իրավունք ունի օրենսդրական համապատասխան պայմանների առկայության դեպքում ժառանգ հանդիսանալ իր ծողների և նրանց ազգականների: Եվ որպեսզի հարցն այդպես էլ պարզորոշ ընկալվի, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտա, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1223-րդ հոդվածը լրացնել հետևյալ շարադրանքով, նոր՝ 3-րդ կետով.

Այն դեպքում, երբ համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ դատարանի որոշմամբ պահպանվում են անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունները ծնողներից մեկի կամ ըստ ծագման՝ այլ ազգականների հետ, որդեգրվածը և նրա երեխաներն ըստ օրենքի ժառանգում են այդ ազգականների մահվան դեպքում, իսկ վերջիններս էլ ժառանգում են ըստ օրենքի՝ որդեգրվածի և նրա երեխաներին մահվան դեպքում:

Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ ժառանգումը չի բացառում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսվող ժառանգումը:

Մենք արդեն վերևում նշել ենք, որ որդեգրումը որպես իրավաբանական փաստ, որքան էլ որդեգրվածին և որդեգրողին հավասարեցնում է ծնողին և զավակին, այնուամենայնիվ, այս երկու ինստիտուտները հավասար չեն կարող լինել: Եթե ծնող-զավակ կապը օբյեկտիվ է և անբեկանելի, ապա որդեգրող-որդեգրված կապը իրավական կապ է, որը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կարող է վերացվել: Որդեգրման վերացումը կարգավորվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքով, որի իրավակարգավորման պայմաններում շատ հարցեր, կապված ժառանգման հետ, մնում են չկարգավորված: Ընդ որում, պետք է ասել, որ որդեգրման վերացման նյութաիրավական հետևանքների ուղղությամբ առանձնակի շատ ուսումնասիրություններ չեն կատարվել: Միայն կարելի է վկայակոչել ռուս հայտնի ցիվիլիստ Օ.Ս. Իոֆֆեի մոտեցումը, որ «որդեգրման վերացումն ինքնին վերացնում է նաև ժառանգման բնագավառում մյուս բոլոր իրավաբանական փաստերը»:

ՀՀ ընտ.օր. 129-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանվում է, որ *երեխայի որդեգրումը վերացվում է դատական կարգով: Որդեգրումը դադարում է երեխայի որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:*

ՀՀ ընտ.օր. 132-րդ հոդվածի 1-3-րդ մասերով էլ սահմանվում է.

1. Դատական կարգով երեխայի որդեգրումը վերացնելիս որդեգրված երեխայի և որդեգրողների (որդեգրողների ազգականների) փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները դադարում են, և վերականգնվում են երեխայի ու նրա ծնողների (ազգականների) փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, եթե դա են պահանջում երեխայի շահերը (ընդգծ. մերն է.):

2. Որդեգրումը վերացնելիս երեխան դատարանի վճռով հանձնվում է ծնողներին: Եթե ծնողները բացակայում են, կամ երեխային ծնողներին հանձնելը հակասում է նրա շահերին, ապա երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին:

3. Որդեգրման վերացման հարցի հետ միաժամանակ դատարանը նաև որոշում է որդեգրման կապակցությամբ երեխային տրված անունը, հայրանունը և ազգանունը, ինչպես նաև ծնողյան փոփոխված ժամանակը և վայրը պահպանելու հարցը:

Տասր տարին լրացած երեխայի անունը, հայրանունը և ազգանունը փոփոխել հնարավոր է միայն նրա համաձայնությամբ:

Նախ պետք է ասել, որ ՀՀ ընտ.օր. 132-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքին, երբ վերացվում է անչափահաս երեխայի որդեգրումը, որի դեպքում վերականգնվում են իրավունքներն ու պարտականությունները որդեգրվածի և նրա ծնողների միջև, սակայն ոչ թե ավտոմատ կերպով, այլ միայն երեխայի շահերից ելնելով: Իզուր չէ, որ ՀՀ ընտ.օր. 129-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ երեխայի որդեգրման վերացման մասին գործը քննվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ, և հենց այդ մարմինն էլ պետք է եզրակացություն տա, թե որքանով կարող է երեխայի շահերից բխել որդեգրվածի և ծնողների միջև իրավունքների և պարտականությունների վերականգնումը: ՀՀ ընտանեկան օրենսգրքը նախատեսում է նաև որդեգրման վե-

րացում որդեգրվածի չափահասության դեպքում, երբ որդեգրման վերացման պահանջով հանդես գալու իրավունք ունի հենց որդեգրվածը: Այսպես, համաձայն ՀՀ ընտ.օր. 131-րդ հոդվածի՝ *«Երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեն նրա ծնողները, երեխայի որդեգրողները, խնամակալության և հոգաբարձության մարմինը, ինչպես նաև տասնութ տարին լրացած որդեգրվածը (ընդգծ. մերն է)՝ սույն օրենսգրքի 133-րդ հոդվածով նախատեսված դեպքերում»:* ՀՀ ընտ. օր. 133-րդ հոդվածով էլ սահմանվում է, որ *«Երեխայի որդեգրման վերացում չի բույլատրվում, եթե որդեգրումը վերացնելու մասին պահանջ ներկայացնելու պահին որդեգրված երեխան դարձել է չափահաս, բացի այն դեպքերից (ընդգծ. մերն է), երբ նման վերացման համար առկա են որդեգրողի և որդեգրված երեխայի, ինչպես նաև որդեգրված երեխայի ծնողների փոխադարձ համաձայնությունը, եթե ծնողները ողջ են, գրկված չեն ծնողական իրավունքներից, կամ դատարանը նրանց անգործունակ չի ճանաչել»:*

Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ որդեգրման հետևանքներն ուղղված են հետագային, և այդպիսիք չեն շոշափում բոլոր այն գործողությունները, որոնք տեղի են ունեցել մինչև որդեգրման վերացումը: Երբ որդեգրվածը ժառանգություն է ստացել մինչև որդեգրումը վերացնելը, ապա որդեգրումը վերացնելուց հետո որևէ հարց չի կարող բարձրանալ նրա ստացած ժառանգությունը վերադարձնելու կամ այլ կարգավորում նախատեսելու ուղղությամբ:

Բանավիճային է համարվում ընդամենն այն հարցը, թե ինչպես պետք է վարվել, երբ որդեգրումը վերացնելու գործընթացը սկսվում է ժառանգությունը բացելուց հետո: Հասկանալի է, որ ժառանգությունը բացելուց հետո որդեգրվածը կարող է ընդունել ժառանգությունը, և այդ գործընթացը կարող է ընթանալ որդեգրումը վերացնելուն ուղղված գործընթացին զուգահեռ: Չմտնելով իրավաբանական գրականության մեջ այս կապակցությամբ արտահայտված իրարամերժ կարծիքների ոլորտ՝ նշենք, որ քանի դեռ որդեգրումը վերացնելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ չի մտել, որդեգրումը չի համարվում վերացված, հետևաբար իրավական տեսանկյունից որդեգրվածը համարվում է ժառանգ, հետևաբար նա բոլոր իրավունքներն ունի ստանալու ժառանգությունը: Եվ եթե որդեգրվածը ժառանգությունը ստանալու վեցամսյա ժամկետի ընթացքում ընդունել է ժառանգությունը, սակայն մինչև վեցամսյա ժամկետի ավարտը որդեգրումն արդեն իսկ վերացվել է, դա չպետք է խանգարի որդեգրվածին՝ համարվելու ժառանգությունն ընդունելու պահին նա լիովին գտնվել է իր իրավունքների մեջ՝ լինելու ժառանգ և ընդունելու ժառանգությունը: Նման մեկնաբանությունը բխում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության սահմանադրական պահանջից:

- ¹ Տե՛ս Պչелинцева Л.М. Комментарий к семейному кодексу Российской Федерации. 3-е издание. М. НОРМА. 2004. С. 566.
- ² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով) /Պաշտոնական տեղեկագիր/. Եր. 2012. էջ 30:
- ³ Տե՛ս Комментарий к семейному кодексу Российской Федерации /отв. ред. И.М.Кузнецова./ М. 1996. С. 339.
- ⁴ Տե՛ս Комментарий к части третьей гражданского кодекса Российской Федерации /под ред. А.Л. Маковского, Е.А. Суханова/ М.2002. С. 176; Комментарий к гражданскому кодексу Российской Федерации. Часть третья (постатейный) /отв.ред. Л.П. Ануфриева/ М.2004.С. 125; Պչелинцева Л.М. Комментарий к семейному кодексу Российской Федерации. 3-е издание. М. НОРМА. 2004. С. 566.
- ⁵ Տե՛ս Պչелинцева Л.М. Комментарий к семейному кодексу Российской Федерации. նոյն տեղում, էջ. 566:
- ⁶ Տե՛ս Гришаев С.П. Наследственное право; Учебно-практическое пособие. М. Проспект. 2013. С. 89.
- ⁷ Տե՛ս Комментарий к части третьей гражданского кодекса Российской Федерации /под ред. А.Л. Маковского, Е.А. Суханова/ М.2002. С. 176.
- ⁸ Տե՛ս Иоффе О.С. Советское гражданское право: Курс лекций (Ч. 3). Л. 1965. С. 300.
- ⁹ Տե՛ս Комментарий к гражданскому кодексу Российской Федерации, части третьей /под ред. Т.Е. Абовой, М.М. Богуславского, А.Г. Светланова/ М. 2005. С. 131.

Нина Куцанян

Аспирант кафедры гражданского права
и гражданско-процессуального права института права и политики
Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Наследование усыновленных по законодательству Республики Армения

В научной статье проанализированы особенности и проблемы наследственного права усыновленных. Автор сначала осуждает соотношение правовых норм гражданского и семейного законодательства по этому направлению, комментирует соответствующие законодательные положения и делает заключение о том, что при регулировании наследственного права усыновленных положения гражданского законодательства не могут эффективно действовать без содействия соответствующих положений семейного права: в результате такого содействия существенно расширяются наследственные права усыновленных.

В свете представленных в научной статье комментариев по новому принимается правовое регулирование наследственных прав усыновленных. Это говорит о научной новизне данной работы, которая может быть полезной в правоприменительной практике.

На основе анализа гражданского законодательства ряд стран автор выдвигает некоторые предложения, которые могут существенно помочь развитию института наследования усыновленных в законодательстве Республики Армения.

Ключевые слова: право наследования, наследник, наследование усыновленных, семейное право.

Nina Kutsanyan

PHD student in Civil Rights of Russian- Armenian Slavonic University

SUMMARY

The Inheritance of the Adopted under the Laws of the Republic of Armenia

In the scientific article are analyzed the characteristics and problems of inheritance right of the adopted. The author first condemns the correlation of civil and family legal norms in this area, comments the corresponding legislative provisions and concludes that while the regulation of the hereditary right of the adopted the provisions of family law can't operate effectively without the assistance of the corresponding provisions of family law: in the result of such cooperation are significantly expanded the inheritance rights of the adopted children.

From the point of view of the comments brought in the scientific article, in a new way is adopted the legal regulation of inheritance rights of the adopted children. It speaks about the scientific novelty of this work, which may be useful in law enforcement practice.

Based on the analysis of civil laws of a number of countries, the author puts forward some suggestions that can significantly help the development of the inheritance institution of the adopted in legislation of the Republic of Armenia.

Keywords: heirship, heir, inheritance adopted, Family Law.